

ԿԻՒԿԻԱ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին մի քանի տարիներին արտասահմանում, հատկապես Ֆրանսիայում, Ամստերդամում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մեկը մյուսին կանխելով, օտարերկրացի հայազնեների կողմից լույս են տեսնում Կիլիկիայի պատմությանը, հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրությանը նվիրված համապարփակ հետազոտություններ։ Գրականու-

թյան այդ հոսքի մեջ իրենց ուրույն տեղն ունեն Կիլիկիա երկրամասի տարածքում հայտնաբերված հունարեն և լատիներեն վիմագիր արձանագրությունների հրապարակումները։ Այդ ուսումնասիրություններից միայն երկուսը ներկայացնելու նպատակն է հետապնդում ներկա հրապարակումը։

Ա) GILBERT DAGRON et DENIS FEISSEL. *Inscriptions de Cilicie, avec la collaboration de Antoine Hermay, Jean Richard et Jean-Pierre Sodini*. Paris, 1987 (Travaux et mémoires du centre de recherche d'histoire et civilisation de Byzance, Collège de France, Monographies 4), 297 p., LXVI planches.

Ժիրեր Դագրոնը և Դենիս Ֆեյսելը այս ուսումնասիրության առաջարկում (էջ 7—16) հպանցիկ անդրադառնում են Կիլիկիայի անցյալին, այնուհետև շարադրում են Կիլիկիայի վիմագիր արձանագրությունների վերծանությունների և հրապարակումների համառոտ պատմությունը։ Առաջարկից տեղեկանում ենք, որ այս աշխատության դադարի և նախաձեռնությունը պատկանում է նշանավոր թյուրքաագետ Ժիրեր Դագրոնին, որը սուրբ Թեոդոր վարդի և սքանչելիքների ուսումնասիրության նպատակով, սկսած 1972 թ. ձեռնամուխ է եղել այդ գործին և 1973 թ. Օլիվեր Կալոյի և Ժան Մարսել-Ժորժերի, իսկ 1975 թ. միայն վերջինիս հետ համատեղ այցելել է Կիլիկիա և հավաքել ներկա ուսումնասիրության հիմնական նյութը, իսկ 1977, 1980 և 1982 թթ. Կիլիկիայում կատարած մեկերկու շարաբով գիտարշավների ընթացքում ընդլայնել է արձանագրությունների քանակը, և տեղի բնակչության ու առաջաբանում անուն առ անուն թվարկված մի շարք թուրք գիտնականների օգնությամբ և աշակցությամբ ամբողջացրել ու ճշգրտել է վերծանությունները։ Նշված տարիներին աշխատությունը պատրաստողները Բուրժիայի գիտական շրջանների աշակցությամբ մուտք են դրած և աշխատել են Սելեկիայի, Ադանայի, Տարսուսի և

Էրզնամիթի թանգարաններում։ Առաջաբանում հեղինակներն ընդգծում են, որ իրենք ներկայումս չեն ունեցել հրապարակել Կիլիկիայում հայտնաբերված բոլոր արձանագրություններն անխտիր, այլ միայն նրանք, որոնք հնարավորություն են տալիս ամբողջացնել մեր գիտելիքները առանձին Կիլիկիայի քաղաքների պատմության և ներքին կառուցվածքի վերաբերյալ և հավաստիացնում են, որ հրապարակված 125 արձանագրություններից 74-ը առաջին անգամ են հրապարակվում, ժամանակագրական առումով բնորոշ արձանագրությունները փաստագրում են Կիլիկիայի հելլենիստական, հռոմեական և բյուզանդական դարաշրջանների մշակութային, կրոնական, վարչատարածքային, տնտեսական և քաղաքական կյանքի առանձնահատկությունները։

Այնուհետև հեղինակները գրքի 15 գլուխներում ըստ հայտնաբերման և պահպանման վայրերի վերծանում և պատմաբանական հետազոտության են ենթարկում մասնավորապես Կալիկադոնսյան Սելեկիայի, Դիոկեսարիայի և Օլուայի, Կոռիկոսի, Էլալուս-Սեբաստիայի, Սուրյ-Պոմպիլոպոլիսի, Տարսուսի և նրա թանգարանի, Ադանայի թանգարանի և քաղաքի մերձակայքի, Պիսամ-Մադաբոսյան Անտիոքի և Մալուսի, Ալեկիայի, Մոպսոստիսի, Անավարդայի և նրա շրջակայքի,

Հիերարխիա-կաստարալայի, Իսոսի գաշտի ար-
ձանագրությունները:

Գրքին ունի հինգ հավելված, որոնցից եր-
կուսի հեղինակն է Գենիս Ֆեյսըլը, մյուս երե-
րորդը ըստ հերթականության՝ Անտոն Լե-
մարին, Ժան Պիեռ Սոդիենին և Ժան Ռիշարը:
Հաջորդաբար բերենք նաև բոլոր հավելված-
ների վերնագրերը, ուր Կիլիկիայում հայանա-
բերված մի շարք արձանագրությունների նյու-
թեքը մեկնաբանվում են ավելի լայն պատմա-
աշխարհագրական միջավայրի ընդգրկմամբ,
գիտական շրջանառության մեջ են դրվում երկ-
րամասի մշակույթի նոր հուշարձաններ:

ա) Նոր անդեկոություններ և նոր հաստատության վերաբերյալ:

բ) Արհեստների անունները և անձնանուն-
ները ըստ դանդաղական ապանագրերում:

դ) Սուրբում հայանաբերված ատոկիյան մի
նոր մահարձան:

դ) Վուդ քրիստոնեական և ըստ դանդաղական
դարաշրջանների ճարտարապետական քանդա-
կը, աղյուսները, մետաղյա իրերը:

ե) Հատիկական արեւելքի մեկ տապանագիր
և երկու սալիկ-դիմանշաններ:

Գրքի համառոտ հավելված-լրացումներում
կատարված են հիմնականում մատենագիտա-
կան լրացումներ և ճշգրտումներ, իսկ ցանկե-
րում առանձին-առանձին և ամենայն բարեխղ-
ճությամբ դասված են. ա) հունարեն և լատի-
ներեն անձնանունները, բ) հունարեն, գ) լատի-
ներեն բառերը, դ) աշխատության մեջ օգ-
տագործված հատուկ անուններն ու տերմիննե-
րը, ե) ուսումնասիրության մեջ օգտագործ-
ված հոնարեն տերմինները: Աշխատության
վերջում տրված են նաև վերահրատարակված
արձանագրությունների թվահամարները՝ նախորդ
հրատարակությունների հերթական համարների
մատնանշումով, օգտագործված գրականության
համառոտագրությունների բանալի-ցանկեր:
Վերջում բերված են բոլոր վերծանված ար-
ձանագրությունների լուսանկարները: Գրքում
հրապարակված է նաև Կիլիկիայի քարտեզը,
արձանագրություններում օգտագործված հելլե-
նիսական, հռոմեական, մասամբ բյուզան-
դական դարաշրջանների և ժամանակակից տե-
ղանունների մատնանշումով:

Բուն աշխատության յուրաքանչյուր գլուխ
սկզբում բերված է այդ վայրի վիճակային ար-
ձանագրությունների հրատարակությունների
մատենագիտությունը, տրվում են տեղեկու-
թյուններ վիճաբերի պահպանման վայրի,
հայտնաբերման թվականի և նախորդ հրա-
պարակումների մասին, ըստ տղերքի հերթա-
կանության բերվում են արձանագրությունների

վերծանությունները և տրվում են բոլորի ֆրան-
սերեն թարգմանությունները, ապա ծանոթա-
գրվում են ընթերցման տարբերակ ունեցող
վերծանությունները: Եթե անգամ արձանագրու-
թյան բնագրից չի բխում նրա գրվելու դա-
րաշրջանը, հեղինակները թվագրել են դրանք
մոտավորապես, աշխարհում վկայված երե-
վույթների մոտավոր ժամանակը, տարեթիվ
վերը, արձանագրության և օգտագործված ճար-
տարապետական ձևի ինքնատիպությունները,
նշելով նաև արձանագրության համար օգտա-
գործված քարի կամ այլ նյութի տեսակը, վի-
ճառի շահերը և լուսանկարի կատարման
թվականը: Այս առումով միակ պահանջը, որ
կարելի է ներկայացնել ուսումնասիրողներին
հրատարակությունն ազնիվ կատարելու տես-
նելու մտահոգությամբ, այն է, որ շեն բեր-
ված արձանագրությունների գծանկարները,
մանավանդ որ հրապարակված լուսանկարնե-
րից շատերում փոքրագրված բնագրերը գրեթե
հնարավոր չէ ընթերցել:

Գրքում տեղ գտած արձանագրություններն
ըստ բովանդակության հարցադրում կամ նոր
հնչողություն են տալիս մի շարք պատմաշա-
կութային երևույթների, որոնք բնորոշ էին
Կիլիկիա երկրամասին և նրան մերձակա շր-
ջանների քաղաքակրթությանը: Հայտնաբերված
արձանագրությունների մի նշանակալի մասն
ունի պաշտամունքային նշանակություն: Դրանց
մեջ հատուկ հիշատակության են արժանի հը-
նագույն կրոնական կենտրոններ Օլբայում և
նրան սահմանակից Դիոկեսարիայում հայտ-
նաբերված քրմերի և քրմապետների ցանկերը
(մ. թ. ա. I և մ. թ. II դարեր), որոնք
Կոռնիոսում գտնված հելլենիստական դարա-
շրջանի աստվածությունների (կոռնիոսյան Զես
և Հերմես) զոհասեղանների (մ. թ. 209—
211), մի շարք վայրերում (Մոպսոսեստիա և
այլուր) պահպանված նույն և հետագա դա-
րաշրջանի բնօրինակային արձանագրությունների,
տապանագրերի և հռոմեական կայսրերի պաշ-
տամունքին ձոնված վիճաբերի հետ միասին
ընդլայնում են մեր պատկերացումները հե-
թանոսական պաշտամունքային կենտրոնների,
երկրպագվող աստվածությունների, քրմական
դասի և այլևայլ երևույթների մասին: Մեծ
արժեք են ներկայացնում նաև բրիտանական
պաշտոնական շրջանի և դրանից
հետո գրված տապանագրերը, եկեղեցիների և
կաթոլիկոսական մականների վրայի արձա-
նագրությունները, որոնք ուսումնասիրության
անգնահատելի նյութ են տալիս արևելյան
քրիստոնեության այս օջախի կյանքի որոշակի
խնդիրների վերաբերյալ:

Երկրամասի քաղաքական պատմության ուսումնասիրության տեսանկյունից բազմանշանակ է Կիլիկիայի հնագույն քաղաքական կենտրոններից մեկում՝ Տարսուսում հայտնաբերված տեղական արթաշիկ Տարկոնդիմոսի որդու պատվին փորագրված արձանագրությունը (մ. թ. I դար)։ Հռոմեական կայսրերի պատվանդանների շարքերը ճշգրտելու տեսանկյունից կարելի է բազմաթիվ արձանագրություններ գտնել գրքում զետեղված գրեթե բոլոր աշխարհագրական շրջաններից։ Երկրամասի վարչական բաժանման պատմության տեսանկյունից ուշագրավ են Կիլիկիայի, Իսավրիայի և նրանց առանձին քաղաքների կառավարչներին հիշատակող հռոմեական և բյուզանդական դարաշրջանների վիճաբերք, առանձին հողատիրոջ տիրույթի սահմանաքարը (№ 20), Մոպսուեստիայի ուշ հռոմեական կարգավիճակը բնորոշող (№ 86), և Սուլյոմոպեդոսի ամրոցի վերականգնման (№ 24) մասին հիշատակող արձանագրությունները։ Այս տեսանկյունից ուշագրավ է գրքի առաջին հավելվածը (հեղինակ՝ Դ. Ֆեյսել), ուր հետազոտողը Մերձավոր Արևելքի նյութի հիման վրա քննուկրթյան է առնում «Πατριάρχης Αλεξανδρείας» (քաղաքի հայր) հաստատությունը, որոշում դրա տարածման շրջանակները և դերը վաղ բյուզանդական քաղաքի կառավարման գործում։ Կիլիկիայի X—XI դդ. պատմության և մշակույթի ուսումնասիրության համար ուրույն հետաքրքրության են արժանի Մոպսուեստիայում հայտնաբերված տապանադրերը։ Այս ցանկը թերի կլինեք, եթե չհիշատակեինք գրքում զետեղված, երկրամասի տնտեսական կյանքը, արհեստները և առևտուրը ներկայացնող վավերագրերը։ Դրանց մեջ հատուկ ուշադրության է արժանի Անավարզայի մաքսատան սակագների ցանկի (V—VI դդ.) մեզ հասած հատվածը, ուր թանկարժեք տեղեկություններ յեն հայտնվում չափման միավորների, արտահանվող (կամ ներմուծվող) ապրանքների և դրանց գների վերաբերյալ (№ 108)։ Վիճաբերում վկայված արհեստների և մարդկանց անուններին է նվիրված գրքի երկրորդ հավելվածը (հեղինակ՝ Դ. Ֆեյսել)։

Եթե հետազոտության երրորդ և չորրորդ հավելվածները նվիրված են երկրամասում հայտնաբերված ուշ հռոմեական և վաղ բյուզանդական դարաշրջանների պաշտամունքային և մշակութային նշանակության առարկաներին և նյութերին, ապա հինգերորդում՝ Լատինական Արևելքի քաղաքակրթության նշանավոր գիտակ Ժան Ռիշարի աշխատասիրությունը նվիր-

ված է Կիլիկիայի հայկական թագավորության ժամանակաշրջանի երեք հուշարձանների հրապարակմանը, որոնք պահպանվում են Ադանայի և Էրզնայի թանգարաններում։ Դրանցից առաջինը այն ժամանակվա մայրաքաղաք Սսի (այժմ՝ Կոզան) մոտակայքում հայտնաբերված, 1233 թ. սեպտեմբերի 20-ով թվագրվող մի լատինագիր տապանաքար է, որը գրված է ոմն Ստեփանոս Կրեսոնի դստեր գերեզմանին։ Հետազոտողի կարծիքով, ցայսօր գիտության հայտնի այդ անձնավորությունը և նրա ընտանիքը ըստ վկայված անվան պետք է ֆրանկ լինի, թեև այդ անունը երբեք հիշատակված չէ Երուսաղեմի թագավորության, Տրիպոլիի կոմսության, Անտիոքի դքսության և Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունների հայտնի անձնավորությունների և ավատատիրական տների մասին հիշատակող վկայություններում։ Ապա շարունակվում էր ենթադրությունների շարքը, Ժան Ռիշարի պարբերաբար է Կիլիկիայում լատինների հաստատվելու երկու հիմնական շրջան։ Նա հետևողական է, թե նշված ընտանիքի անդամները կարող են լինել և՛ XII դարի առաջին կեսին Կիլիկիայում բնակություն հաստատած ֆրանկներից, և՛ նրանցից, ում օգտագործում էր Լեոն Թագավորը կազմակերպելու համաքիր տերության կառավարումը։ Ըստ հետազոտողի պնդման, այն իր կառուցվածքով կերպնում էր Լատինական Ասորիքի երկրների պետական կառույցը։ Հեղինակը զուգահեռ է անցկացնում այս և Կիպրոսում գտնված, և 1268 թ. թվագրված մի տապանագրի հետ և ենթադրում է, որ Զիրիլ (Զարեկ) Կրեսոնի տապանաքարը կտրող է կիպրոսյան ծագում ունենալու Ժան Ռիշարի գրչի տակ ընկնող առեղծվածային երանգ են ընդունել Կոռնիկոսի մերձակայքում գտնված և Էրզնայի թանգարանում պահվող երկու սալիկ-գինանշանները, որոնց զուգահեռները հարգելի հեղինակը կրկին ենթադրաբար գտնում է միայն Կիպրոսում, բացառելով Կիլիկիայի հայոց թագավորության կապերը Կիպրոսի Լուսինյանների հետ մինչև 1360 թ., անտեսելով նաև այդ գինանշաններից մեկում պատկերված թռչուն-խորհրդանշանների անվիճելի նմանությունը հայկական որոշ գինանշանների հետ։ Եվ ինչն էլ կարելի էր։ Խաչակրաց Արևելքի պատմության նշանավոր գիտակը, ելնելով ներկայացվող գրքի ընդգծված ուղղությունից, հետևելով Ժիլբերտ Դագրոնի և Դենիս Ֆեյսելի առաջարկներին, ուր Կիլիկիայում ծագված քաղաքակրթությունների շարքում մոռացված է անգամ XI—XIV դդ.

Հայոց թագավորության և հայկական հոծ բնակչության գոյության մասին հիշատակումը, առանց այդ դարաշրջանի Կիլիկիային հատուկ լիթնիկական և բաղադրական դեմքի բացահայտման է բնեում Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններում հայտնաբերված նյութական մշակույթի արժեքները: Հանգամանք, որը երբեք հարկի չի եղել ֆրանսիական և միջազգային պատմագրությանը: Այնուամենայնիվ, գրքում հրապարակված նյութը ուսումնասիրության փայլուն ատաղձ կարող է հանդիսանալ հելլենիստական, հռոմեական,

բյուզանդական, լատին արևելքի տրվեստով և Կիլիկիայի հայոց թագավորության պատմությամբ և մշակույթով զբաղվող մասնագետների համար:

Այս հրաաարակությունը մեկ անգամ ևս զալիս է հաստատելու, թե որքան կարևոր է Կիլիկիա երկրամասի քաղաքակրթության բազմակողմանի ուսումնասիրությունը, հասկանալու համար ողջ հելլենիստական Մերձավոր Արևելքի հետագա պատմական ճակատագիրը, նրա տեղն ու գերը մարդկության մշակութային գանձարանում:

Բ) MUSTAFA SAYAR, PETER SIEWERT, HANS TAEUBER. *Inchriften aus Hierapolis-Kastabala, Bericht über eine Reise nach Ost Kilikien, Mit einem Beitrag von James Russel*. Wien, 1989 (Österreichische Akademie der Wissenschaften, philologisch-historische Klasse. Sitzungsberichte, 547. Band), 40 S., 39 Abbildungen.

Ի տարբերություն նախորդ աշխատանքի, ուր փորձ էր կատարված հրապարակել Կիլիկիայի ողջ տարածքի հունարեն և լատիներեն արձանագրությունները, այստեղ հրապարակված են երկրամասի միայն մեկ բնակավայրում՝ Հիերապոլիս-Կաստաբալայում վերջին տարիներին հայտնաբերված, սակայն գեոևա չհրապարակված վիմագրերը Պետեր Ջիվերտը աշխատության թուղթիկ ներածությունում անգրադադրաբար է վիճակի գիտնականների կողմից Կիլիկիայում կատարված գիտարշավներին, նշում է, որ ներկա հրապարակման ուսումնասիրության նյութը դարձած աբձանագրությունները հետազոտվել են 1988 թ. հոկտեմբերին Կիլիկիայում ձեռնարկված գիտարշավի ընթացքում: Ընդհակառակը է հայտնում գիտարշավը ֆինանսավորած և աշակցություն ցույց տված վիճենայի և Թուրքիայի բոլոր գիտական կենտրոններին, թանգարաններին և նրանց ղեկավարներին: Զբոսում է, թե որտեղ են հայտնաբերվել հրապարակված 31 հունարեն արձանագրությունների հիմնական խմբերը:

Ըստ արձանագրությունների բովանդակության, հեղինակները դրանք դասգասել են հետևյալ ենթավերնագրերի տակ.

ա) Հռոմի կայսրերին ընծայված և նրանց հիշատակող արձանագրություններ (3 միավոր),

բ) ընծայական այլ արձանագրություններ (1 միավոր),

գ) հեթանոսական աստվածությունների ձեռնված արձանագրություններ (3 միավոր),

դ) ուշ շրջանի՝ II և III դդ. կայսերական պաշտամունքի կլոր ղոհասեղաններ (12 միավոր),

ե) տապանագրեր (11 միավոր),

զ) շրմուղ Պիտամոսի վրա:

Գրքի վերջում կազմված և հրապարակված են նաև արձանագրությունների ողջ բառապաշարի և լուսանկարների առանձին ցանկեր: Արձանագրությունների լուսանկարների տախտակի սկզբում վերահրատարակված է նաև Հիերապոլիս-Կաստաբալայի (այժմ՝ Բողոքոմ ամրոց) մերձակայքի բավական մանրամասն, միկրոտեղանուններով հարուստ, ժամանակակից թուրքական քարտեզը:

Գրքում հրապարակված արձանագրությունները վերաբերում են մ. թ. I—III դդ. Դրանք հետաքրքիր նյութ են պարունակում հռոմեական կայսերական ընտանիքի անդամների (Ֆաուստինա II, Կարակալա, Գորդիանոս III) և նրանց տիտղոսաշարերի, Կիլիկիայում կայսեր պաշտամունքի, Հիերապոլիս-Կաստաբալայում երկրպագված հեթանոսական տեղական աստվածությունների (Ասկլեպիոս, Հյուգիեյա, Հելիոս, Պյուտեոս և այլն), քաղաքի ներքին կառուցվածքի և այդ ժամանակ շրջանառության մեջ եղած անձնանունների վերաբերյալ:

Թվում է, թե վերծանված արձանագրությունների արժեքն ավելի կմեծանար և մյուս հետազոտողների համար համեմատելու նյութ կլի-

ներ, եթե հեղինակները լուսանկարի հետ միասին տալին նաև յուրաքանչյուր վիճակի գծանկարը, որը տրված է միայն երկու դեպքում, առավել ևս, որ լուսանկարների մի նշանակալի մասից դժվար է կոհել պատճենված արձանագրության ընթերցումը:

Գիրքը հրապարակված է մեծ խնամքով և

ընդլայնում է Հոռոմեական կայսրության տիրապետության ներքո ծաղկող Հիերապոլիս-կաստաբալայի նշանակության և դերի մասին մեր աղոտ պատկերացումները:

Ա. Ա. ԲՈՌՅԱՆ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. Գրքերի գործառնությունը որպես գրական լեզու ԺԼ-ԺԹ դդ., ՀՀ ԳՍ. հրատարակչություն, Երևան, 1990, 410 էջ:

XVIII—XIX դդ. գրաբարը ցարգ չի դարձել առումնադրության հատուկ առարկա: Այն ընդհանուր գծերով արժանացել է հայագիտական առանձին աշխատություններում: Հայագիտության այդ շրջանի գրաբարին անգրագործել են այն ժամանակ, երբ լուսաբանել են նոր գրական հայերենի կազմավորման հարցերը: Հայտնի է, որ հայ լեզվաբանները ամբողջական ուսումնասիրություններ են նվիրել հայոց լեզվի պատմության առանձին փուլերի՝ հին հայերենի, միջին հայերենի, աշխարհագրորդական գրությունների, Հիմնականում հետազոտվել է մինչև XI դարի գրաբարը: Բայց գրաբարը գործածել է նաև հետագա դարերում և այսօր էլ գործածում է որպես պաշտամունքային լեզու եկեղեցում: Իսկ XI դարից հետո ընկած ժամանակաշրջանի գրաբարը առանձին հետազոտության նյութ չի դարձել: Նվ ահա այդ բացը մասամբ լրացվում է սույն աշխատությամբ, որում մանրամասնորեն քննված են XVIII—XIX դդ. գրաբարի գործառնության խնդիրները: Դրանում քննության են ենթարկվել գրաբարի զարգացման ընդհանուր օրինաչափություններն ու ժամանակի կոնկրետ առանձնահատկությունները լեզվական տարրեր մակարդակներում, վեր են հանվել ու մեկնարկվել տվյալ ժամանակին առանձնահատուկ լեզվական լուրահատկությունները: Այդ հարցերին պատշաճ պատասխան տալու համար հեղինակն օգտագործել է մեծ քանակությամբ (շուրջ 250 անուն) գրավոր՝ սույադիր և ձեռագիր, բովանդակությամբ բազմազան աղբյուրներ, նկատի ունենալով, որ այդ գրաբարը նաև գրաբարը հիմնականում գործածել է որպես գրավոր հաղորդակցման միջոց, և վերահիշյալ գրավոր աղբյուրները երևան են եկել տարբեր ժամանակահատվածներում, դրանք փաստական առատ նյութ են մատակարարել խնդրո առարկա հարցերի պարզաբանման համար: Լեզվական իրականությունները քննելիս հեղինակը ընդհանուր առմամբ հենվում է ամբողջական բնագրերի տվյալների վրա, բայց

առանձին դեպքերում նա օգտվել է նաև ընտրանքային գրականությունից: Հետո որում օգտագործվել են նույն երկերի առանձին տարբերակները, երբեմն էլ թարգմանությունները համեմատվել են օտար բնագրերի հետ:

Աշխատությունում գիտական պատշաճ բարեխղճությամբ ներկայացված է հարցի պատմությունը, նշվել են բոլոր այն բերականների ու լեզվաբանների ծառայությունները, որոնք դրսևորվել են տվյալ բնագավառում:

Լեզվական և արտալեզվական շափանդներին հիման վրա վեր են հանվել գրաբարի գործառնության երեք ենթաշրջանները: Ցույց է տրվել, որ առաջին ենթաշրջանում գրաբարի զարգացման հիմնական միտումը լատինարանության հաղթահարումն է, երկրորդում՝ նրա խնդիրն ու մշակումն ու կատարելագործումը, իսկ երրորդում՝ գրաբարի համագործակցումը աշխարհագրորդական հետ:

Վ. Համբարձումյանը մանրամասն քննության է ենթարկել գրաբարի ու աշխարհագրորդական լեզվաբանների պայքարը՝ «գրապայքար» և լատինարանության հաղթահարումը: Լեզվական նյութը քննել է հայերենի պատմության համակարգում, այսինքն՝ նկատի են առնվել ոչ միայն նախորդ փուլերի, այլև նոր շրջանի հայերենի փուլում գրաբարի կրած փոփոխությունները, ամեն մի իրողություն վեր է լուծվել արտահայտության և բովանդակության պլանների փոխադարձությունների հաշվառմամբ՝ նկատի առնելով նաև դրանց գործառնական արժեքը: Այդ երկու դարի գրաբարի վերլուծությունը կրում է համաժամանակյա բնույթ, իսկ նրա հարաբերությունը նոր շրջանի գրական և խոսակցական տարբերակների հետ՝ տարածմանակալ բնույթի: Ցույց է տրվում, որ այդ ժամանակահատվածի գրաբարի պատմությունը նրա բառապաշարի, ձևաբանական և շարահյուսական կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների արդյունք է:

Աշխատությունը բազմազան է առաջադրանքի, հինգ գլուխներից, ընդհանուր եզրակա-